ՀԱՍՄԻԿ ՊԱՐԱՆՅԱՆ
ԵՊՀ

ՄԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Մարդկային ոչ մի կենսագրություն չի կարող տալ այն, ինչ որ հաջողված դիմանքանդակը»
(Ռոդեն)[1]**:**

«Կյանքում լինում են դեպքեր կամ հանդիպում ես մարդկանց, որոնց երկար տարիներ չես մոռանում: Չես մոռանում այն պատճառով, որ նրանցից ստացած տպավորություններդ լինում են ուժեղ, անջնջելի: Ճիշտ է, այդ դեպքերի եւ ծանոթությունների մանրամասները չես հիշում, սակայն էականը, բնորոշը, առավել տպավորիչը երկար ժամանակ մնում են հիշողությանդ մեջ: Իսկ երբ այդ դեմքերը քեզ համար սիրելի են եւ թանկ, նրանց վերհիշելիս հոգիդ մի տեսակ ջերմանում է եւ ամեն անգամ պատճառում քեզ ազնիվ ապրումների երջանիկ րոպեներ»[2]*: Սրանք խոսքերն են Ի. դարի նշանավոր քանդակագործ Արա Սարգսյանի, ում ստեղծագործությունը բացառիկ տեղ է զբաղեցնում հայ կերպարվեստի դասական ժառանգության մեջ: Նրա բազմաբովանդակ եւ բազմակողմանի արվեստը, օժտված լինելով խոր հայրենասիրությամբ, մարդասիրական գաղափարներով, գեղարվեստական մեծ վարպետությամբ, մեկն է մեր ժողովրդի՝ խորհրդային ժամանակաշրջանում ապրած կյանքի, նրա հույզերի ու ձգտումների, մտքերի եւ գաղափարների հարազատ ու վառ արտահայտություններից: Նրա գործերում առկա են ժամանակի ոգին, առաջավոր մտածողի մտորումները, մտահոգությունները ժողովրդի վիճակի եւ ճակատագրի մասին: Արա Սարգսյանի կրծքի տակ բաբախել է զգայուն հայրենասերի ջերմ սիրտը: Նրա կյանքի յուրաքանչյուր քայլը՝ ստեղծագործական թե հասարակական, ուղղված են եղել հայրենիքին ծառայե-*

[1] Տես **В. Стародубова,** Огюст Роден: жизнь и творчество, Москва, 1998, էջ 151:
[2] **Արա Սարգսյան,** Հոդվածներ, ելույթներ, հուշեր, Երեւան, 1982, էջ 184:

լու նպատակին, հասարակ մարդկանց լուսավորելու, նրանց մշակութային մակարդակը բարձրացնելու ազնիվ ձգտումներին:

Պահպանված նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաեւ թանգարանային ցուցանմուշները եւ լուսանկարները փաստում են, որ Արա Սարգսյանն այն քանդակագործներից էր, ում նախասիրություններից դուրս չի մնացել քանդակային արվեստի եւ ոչ մի ժանր՝ մոնումենտալ կոթող, լայնածավալ հարթաքանդակ ու դիմապատկեր՝ կատարված ճարտարապետական համալիրի հետ համահունչ, որ ստեղծում է ձեռակերտի եւ անձեռակերտի հիանալի համադրություն, կոմպոզիցիոն, սյուժետային հորինվածքներ ու դիմաքանդակ:

Հոգեբանական խորության հասնող իրապաշտական դիմաքանդակներում մեզ ներկայանում են անհատներ, որոնք այս կամ այն կերպ մեր ազգի դիմագիծն են՝ Միքայել Նալբանդյան, Թորոս Թորամանյան, Վարդան Աճեմյան, Սուրեն Սպանդարյան, Վաղարշ Վաղարշյան, Վահան Թոթովենց, Ռաֆֆի, Նիկողայոս Տիգրանյան, Ալեքսանդր Շիրվանզադե, Զարենց, Հր. Աճառյան... եւ այս շարքն անվերջանալի է թվում: Սրանք սոսկ արտաքին նմանությամբ արված պորտրետներ չեն. Արա Սարգսյանի վարպետությունն այս ժանրում այն էր, որ նրան փայլուն հաջողվում էր յուրաքանչյուր դիմաքանդակում փնտրել եւ գտնել առանձնահատուկը, ընդգծել՝ ինչ բնորոշ է, եւ այդպիսով, սովորական դիմաքանդակը հասցնել կերպարի աստիճանի: Արամ Երեմյանը քանդակագործի կերպարների մասին ասում է. «Արա Սարգսյանի կերտած դիմաքանդակներում քանդակագործը տալիս է դեմքի այն բոլոր ձեւերն ու գծերը, որոնք արտահայտում է մարդը: Դուք նրա պորտրետները դիտելիս ոչ թե միայն տպավորություն եք ստանում, այլեւ տեսնում եք նույն խարակտերով ապրող մարդ: Հենց դրա մեջ է Սարգսյանի քանդակած կերպարների նշանակությունը»[3]:

Արա Սարգսյանի դիմաքանդակային արվեստը օժտված է մտքեր եւ տրամադրություններ արտահայտելու ինքնատիպ պլաստիկայով, կերպարն ամբողջացնող քանդակային նյութի ճիշտ ընտրությամբ: Նա, որպես ռեալիստ ստեղծագործող, իր կերպարները փնտրել է կյանքում, տպավորություններ ստացել շրջապատից, գտել իր որոնածը, ապրել նրանց հետ իրականության եւ միաժամանակ իր երեւակայության մեջ, մտերմացել նրանց հետ եւ երբ վերջնականապես համոզվել է կերպարի ճշմարտացիության մեջ, կերտել է վերոհիշյալ անհատներին, որոնք այլեւս մշակութային

[3] **Ա. Երեմեան,** Արձանագործ Արա Սարգսեան, «Հայաստանի կոչնակ» ամսագիր, Նյու-Յորք, թ. 2, 1926, էջ 73:

Նկ. 1. Թորոս Թորամանյանի դիմաքանդակը,
1927 թ., հղկված բազալտ, 55 x 80 x 50 սմ, ՀԱՊ

արժեքներ են: Այս համոզմանը հանգում ես, երբ կարդում ես վարպետի հուշերը Թորոս Թորամանյանի դիմաքանդակը (1927 թ., 1938 թ. հղկված բազալտի վրա, 50x80x50 ՀԱՊ) կերտելու վերաբերյալ: Նկարիչ, արվեստաբան Օնիկ Ավետիսյանը Արա Սարգսյանի դիմաքանդակային արվեստի մասին հպարտորեն գրում է. «Յաղթական մարդեր, հերոս մարդեր են Արա Սարգիսեանի ներկայացուցած տիպարները. գործունեայ, գիտակից մարդեր՝ ըլլան անոնք ռազմիկներ, գիտնականներ, պետական գործիչներ կամ արուեստագէտներ: Յաղթական՝ իրենց կեցուածքի մէջ, հեռուն սեւեռած իրենց նայուածքով՝ միեւնոյն ատեն ապագան վստահութեամբ դիմագրաւող տեսլապաշտ եւ հաւատացող տիպարներ են անոնք»[4]:

Եւ հիրավի, պետք է լինել չափազանց նուրբ հոգու, խոր դիտողականության տեր մարդ, որ բնավորությունների ու զգացմունքների այս ամբողջության մեջ կարողանա կերտել այնպիսի դիմաքանդակներ, որոնք կունենան բնորոշ, էական եւ հատկանշական բոլոր այն գծերն ու առանձնահատկությունները, որոնք հատուկ կլինեն միայն այդ անհատին՝ այդպիսով պահպանելով նաեւ կերպարի ինքնատիպությունը: «Մարդիկ իրար նման չեն, - կարդում ենք քանդակագործի հուշերում: - Նրանք բոլորն էլ տարբեր են՝ թե՛ ներքինով եւ թե՛ արտաքինով: Մարդկանց ճանաչելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակաչափ: Որքան մարդիկ՝ այնքան էլ ժամանակ: Տարբեր մարդկանց համար՝ տարբեր ժամանակաշրջան. մեկ ժամից մինչեւ տարիներ... Այո՛, տարիներ, որովհետեւ պատահում են մարդիկ, որոնց մտքերն ու զգացմունքներն այնքան են քողարկված ու թաքնված, որ տարիներն անգամ անօգնական են թափանցելու նրանց էության խորքը: Նրանք դարանամուտ հոգիներ են, որոնց ճանաչելը, ի վերջո, գրեթե անհնարին է»[5]: Եւ այդուհանդերձ, Արա Սարգսյանի գեղարվեստական ժառանգության պատկառելի մաս հանդիսացող նրա դիմաքանդակային ժանրի ստեղծագործությունները փաստում են, որ վերոհիշյալ տարբերությունները չեն խանգարել քանդակագործին փնտրել, գտնել ու ստեղծել դիմաքանդակներ՝ կերպարի անվրեպ եւ սուր բնութագրմամբ:

Ահա այսպես է նկարագրում քանդակագործն իր առաջին հանդիպումը Թ. Թորամանյանի հետ. «Առաջին տպավորությունը, որ ստացա նրանից, ազդեցիկ արտաքինն էր: Դանդաղ եւ հաստատ քայլվածքը, ամուր կազմվածքը, իրանը՝ քիչ կքած դեպի առաջ, գլուխն ուսերի մեջ խրված: Կարծեք ծանրաքայլ շարժվող մի մոնումենտ լիներ՝ նման իր հետազո-

---

[4] **Օ. Ավետիսեան**, Արուեստի վաստակաւոր գործիչ քանդակագործ Արա Սարգիսեան, «Ամի» ամսագիր, Բէյրութ, թ. 9, 1946, էջ 493:

[5] Քանդակագործի անձնական՝ այժմ ընտանեկան արխիվ:

տած եւ չունչ տված կոթողներին: Հագել էր շատ հասարակ ամառային մի կիտել: Երբ բարեւելու համար նա հանեց գլխարկը, ես իմ առաջ տեսա կենդանի դիմաքանդակ... Մազերը մաքուր խուզված էին, եւ պարզ գծագրվում էին գլխի կոնտուրները: Դեմքն արեւից խանձված էր, կարծես բրոնզե, հոնքերը թավ էին ու ծածկում էին խոշոր աչքերը, որոնց տակ կնճռապատ տոպրակներ էին կախված: Սապատավոր քիթը, մանավանդ պրոֆիլից, շեշտում էր դեմքի հայկական տիպը... մի խոսքով՝ նա կենդանի մի քանդակ էր՝ մոնումենտալ իր բնույթով, ազդեցիկ եւ ներգործող՝ իր ուրույն արտահայտչականությամբ»[6]*: Գուցե եւ Թ. Թորամանյանի կերպարի մոնումենտալ բնույթն է թելադրել քանդակագործին՝ նրա դիմաքանդակը կերտել պլաստիկ ձեւերի մեծ ընդհանրացումներով՝ զոհելով երկրորդական եւ ավելորդ բոլոր մանրամասները, որոնք կարող էին խաթարել կերպարը: Արա Սարգսյանը, իրեն հատուկ վարպետությամբ, այս անգամ եւս թափանցում է անհատի հոգեբանության մեջ, գտնում բնավորության գծերն ու լավագույն կերպով իմաստավորում նրա ամբողջական կերպարը: Թ. Թորամանյանի կերպարը քանդակագործական արվեստի, մասնավորապես դիմաքանդակի յուրօրինակ մեկնաբանություն է, որ եւս մեկ անգամ վկայում է Արա Սարգսյան-պորտրետիստի ունակություններին՝ բովանդակության թելադրած ձեւը միանգամայն ճիշտ գտնելու մասին: Թ. Թորամանյանի քանդակից ստացած առաջին տպավորությունը մոնումենտալությունն է: Եւ հատկանշական է, որ մոնումենտալ լուծումը ձեռք է բերվել ոչ թե խոշոր մասշտաբների ու ծավալների օգնությամբ, այլ կերպարի ճիշտ բնութագրման եւ մտածված որոշ ընդհանրացումների միջոցով: Փոքր ծավալի սահմաններում՝ հաստոցային որոշ արտահայտչաձեւերի առկայությամբ մոնումենտալ ընկալման հասնելը, մոնումենտալն զգալն ու փոխանցելը սովորական դիմաքանդակի մեջ, իրոք, լուրջ նվաճում էր 25-ը դեռ նոր բոլորած երիտասարդ քանդակագործի համար: Հետաքրքիր է նաեւ քանդակագործի մոտեցումը դեպի անհարթ, անմշակ լուծումներով պատվանդանը, որից վեր է խոյանում գիտնականի ողորկ, չափազանց հղկված կիսանդրին՝ ստեղծելով հրաշալի հակադրություն (կոնտրաստ) քանդակի ու պատվանդանի միջեւ: Քանդակագործը Թ. Թորամանյանի կերպարին դինամիկա հաղորդելու համար գտնում է շատ պարզ լուծում՝ վերջինիս ուսը մի փոքր թեքելով դեպի դիտողը: Այս դեպքում Թ. Թորամանյանի փառավոր եւ ազդեցիկ կերպարին ներդաշնակել է նաեւ քանդակագործի կողմից ճիշտ ընտրված նյութը՝ ամրակուռ ու հղկված բազալտը, որը կարծես թե ամփոփում է կերպարի*

[6] **Արա Սարգսյան**, Հոդվածներ, ելույթներ, հուշեր, էջ 187:

մեկնաբանությունը: Սա, իսկապես, շատ խոր, զգացմունքային, պատկառելի դիմաքանդակ է, որը հրաշալի հավերժացրեց Արա Սարգսյանը՝ հետագա սերունդներին փոխանցելով ականավոր հետազոտողի, գիտնականի, իր կյանքն ու գործը անշահախնդրորեն ժողովրդին նվիրած մեծ հայրենասերի եւ, վերջապես, բյուրեղյա հոգու տեր Թորոս Թորամանյանի մոնումենտալ, բայց եւ ընդգծված զգացմունքային կերպարը: Խոսելով այս դիմաքանդակի զգացմունքային, ներգործող տպավորության մասին՝ ակամա մտաբերեցի ստամբուլահայ անվանի լուսանկարիչ Արա Գյուլերի խոսքերը. «Եթե ինչ-որ մեկին նկարում ես, ում հետ ոչ մի կապ չես զգում, դա ուղղակիորեն արտահայտվում է արդյունքի վրա, որովհետեւ ստեղծագործությունն արվում է առանց զգացմունքի եւ հետեւաբար էլ վատ է ստացվում»[7]: Այս խոսքերը, իրոք, ճշմարիտ են դառնում, երբ հիշում ենք, թե ինչ հոգեկան բարձր բավականությամբ, կապվածությամբ, առանձնակի պատկառանքով է արտահայտվում Արա Սարգսյանը Թորոս Թորամանյանի մասին իր հուշերում, որը հենց այդպես էլ վերնագրել է՝ «Թորոս Թորամանյանի դիմաքանդակը կերտելիս...»:

РЕЗЮМЕ

Статья посвящена одной из важнейших работ жанра портретной скульптуры, являющегося солидной частью творческого наследия великого скульптора XX века Ара Саргсяна, изучению и профессиональному анализу портрета выдающегося археолога, настоящего патриота Тороса Тораманяна. В результате изучения материала мы пришли к выводу, что, как и в случае со многими другими скульптурными портретами, здесь также Ара Саргсяну удалось отразить все характерные особенности Тораманяна, представить свойственную его внутреннему миру целостность психологических переживаний, доведя таким образом обыкновенный скульптурный портрет до уровня образа.

SUMMARY

This article is devoted to the study and professional analysis of Toros Toramanyan's portrait, who is an outstanding architect, archeologist, a true patriot. This work in a bust genre is a significant part of Ara Sargsyan's creative heritage, a great sculptor of the 20th century. While studying this material we came to the conclusion that like in his other busts Ara Sargsyan managed to search and find all the features again and again, which are inherent in Toramanyan's nature, and represent the entirety of the psychological emotions of his inner world, thus bringing the ordinary bust to the image level.

[7] «Հայ լուսանկարիչները Օսմանյան կայսրությունում», www.lurer.am, փետրվար 18, 2010 թ.: